

## 83 ՉՈՐ ՓԱՔԻՍԱՆԻ ՄԷՋ

Փաքիստանի Փեշաուար քաղաքին մեջ մզկիթի մեջ տեղի ունեցած պայթյունը ցարդ պատճառաւ է 83 զոհ: Այն պայթյունին պատճառով, որ տեղի ունեցած էր Երկուշաբթի օր աղօթքի պահուն, մզկիթին մէկ մասը փլած էր: Որքան կողմ չստանձնեց այս պայթյունին պատասխանատուութիւնը:



## ՏՈՒՆՍԻ ՓՈՒՍԱՐԹԷՔԻ ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆ

Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ յայտարարեց, թէ 1 Փետրուար 2023-էն սկսեալ ամերիկեան տոլարին փոխարժէքը լիբանանեան ոսկիին դիմաց պիտի դառնայ 15.000 լիբանանեան ոսկի մէկ ամերիկեան տոլարին համար: 25 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով տոլարին փոխարժէքը պիտի բարձրանայ 1500 լիբանանեան ոսկիէն 15 հազար լիբանանեան ոսկիի:



Սալամէ անցնուց, որ այս պիտի կիրարկուի դրամատուններու մէջ գտնուող ի պահ դրուած գումարին համար, նուազեցնելով լիբանանեան ոսկիով դրուած դրամազուրկներուն փոխարժէքը: Դրամատուններու գոյքին արժէքն ալ պիտի նուազի այս որոշումով:

Այս որոշումին ազդեցութիւնը նուազեցնելու համար, դրամատուններուն հինգ տարի ժամանակ պիտի տրուի իրենց կրած վնասը հատուցանելու համար: Ան այս քայլը համարեց միացում դրամանիշի տարբեր փոխարժէքներուն միջեւ եւ որպէս գործադրութիւն միջազգային դրամական հիմնադրամներու հանդէպ պարտաւորութեան: Երէկ, «սեւ շուկայ»ին մէջ լիբանանեան 57 հազար ոսկի կ'արժէր մէկ տոլար:

### ԺՄՍՊԼԱԹ ԾԻԳ ԿԸ ԹԱՓԷ

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախագահ Ռալփ Ժմապլաթ յայտարարեց, թէ իրենց կատարածը ճիգ մըն է քաղաքական համաձայնութեան հասնելու:



Լու Նոր նախագահի ընտրութեան հոլովոյթին մէջ: Ժողով գումարելէ ետք խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի հետ, ան յայտարարեց, թէ չենք կրնար մնալ այս ժամանակ կորսնցնելու հոլովոյթին մէջ, ամէն շաբաթ չկարենալով ընտրել երկրին Նոր նախագահ:

Ժմապլաթ անցնուց, որ Լիբանանի տնտեսութիւնը օրէ օր կը քայքայուի եւ հանրապետութեան նախագահին ընտրութիւնը ու Զամաշխարհային դրամատան դրած պայմաններուն մասամբ ընդունիլով պիտի ստեղծեն դրական մթնոլորտ մը երկրին մէջ:

### ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄ

Ներքին գործերու նախարարութիւնը ձեռքարկած է Մեթնի գաւառի անշարժ գոյքի արձանագրութեան քարտէսը:



տուղարը եւ կարգ մը ուրիշ պաշտօններ փտածութեան եւ կաշառակերութեան ամբաստանութեամբ:

### ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ ԻՐԱՆԻ ԴԵՍ

Միացեալ Նահանգներու վարկաւոր կազմը Նոր պատժամիջոցներ հաստատեց իրանեան եօթը ընկերութիւններու դէմ, այն ամբաստանութեամբ՝ որ անոնք կ'օժանդակեն Ռուսիոյ Դաշնութեան զինեալ ուժերուն:



## ՊԼԻՆՔԸՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Ալեքսիս Դիլլըն մեկնարկեց Միջին Արեւելք իր այցելութիւնը, սկսելով Իսրայէլէն եւ Արեւմտեան Ափին: Ան այցելեց պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպասին: Ապպաս իսրայէլեան կողմին բեռնուց գրաւեալ Արեւմտեան Ափին մէջ արձանագրուած մազլուսի պատասխանատուութիւնը, որովհետեւ անոր վարուելակերպը կը քանդէ երկու պետութեան լուծումի տարբերակը, ոտնակոխելով համաձայնագրերը, շարունակելով գաղութներու հաստատումը, չճանչնալով պաղեստինեան պետութիւնը եւ արգիլելով անոր լիիրաւ անդամ դառնալը Միացեալ ազգերու կազմակերպութեան:



Ապպաս անցնուց, որ դէմ դնելով ինքզինքն պաշտպանելու պաղեստինցի ժողովուրդին բոլոր քայլերուն, կը նշանակէ օժանդակել Իսրայէլի գրաւումի ուժերուն՝ շարունակելու իրենց ժխտական քաղաքականութիւնը:

Նոյն ուժերը նեցուկ կը կանգնին Իսրայէլին՝ շարունակելու համար հողը կցելու եւ միջազգային օրէնքը ոտնակոխելու իր քաղաքականութիւնը: Ապպաս անցնուց, որ պաղեստինեան իշխանութիւնը իր բնակիչները պաշտպանելու համար առաւ քանի մը քայլ, յոյսը կտրելէ ետք արտաքին օժանդակութեան, որովհետեւ Իսրայէլ ոչ մէկ արգելք կը ճանչնայ իր ժխտական քաղաքականութիւնը յառաջ տանելու համար:

Իսկ ԱՄՆ-ի արտաքին գործերու նախարար Ալեքսիս Դիլլըն յայտարարեց, թէ պետք է քայլեր առնել նուազեցնելու համար մազլուսի: Ան յանդէպ, որ պետք է անցնել պաղեստինցիներուն յոյսը դրական ապագայի մը նկատմամբ: Ան գովեց պաղեստինեան իշխանութեան աշխատանքը ահաբեկչութեան դէմ: Պիլլըն խոստացաւ 50 միլիոն տոլար փոխանցել պաղեստինցիներու հարցով զբաղող Միացեալ ազգերու կազմակերպութեան: Ան յայտարարեց, թէ ԱՄՆ կողմնակից է երկու պետութեան գոյութեան եւ դէմ է ամէն քայլի, որ արգելք կը դառնայ անոր իրականացումին:

### ՈՒԵՐԱՆԻՈՅ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ Թագաւորութիւնը յայտարարեց, թէ անյարմար է Ուքրանիոյ ռազմական օդանաւեր յանձնելը: Միացեալ Թագաւորութեան «Իվինկ Սթանտարտ» օրաթերթը յայտարարեց, թէ բրիտանական «Թայֆուն» եւ ամերիկեան «ԷՖ-35» մակնիշի օդանաւերը կ'ընդգրկեն շատ բարդ գործիքներ եւ անոնց վրայ մարզուիլը պիտի տեսնուին:



Միացեալ Թագաւորութիւնը պիտի շարունակէ օժանդակել Ուքրանիոյ՝ անոր ուղարկելով «Չելենճըր» մակնիշի իրասայլեր:

Միւս կողմէ, Ֆրանսա յայտարարեց, թէ «Սեզար» մակնիշի 12 թնդանօթներ պիտի յանձնէ Ուքրանիոյ: Այս թնդանօթները միջին հասողութեան են եւ անոնց արժէքը պիտի վճարուի Ֆրանսայի կողմէ հաստատուած 200 միլիոն եւրօ արժէքով հիմնադրամին կողմէ:

### ԵՆԱԿՈՐՄ ԴԱՇԻՆՔ

ԱՄՆ-ի պաշտպանութեան նախարար Լոյս Օսթին եւ Զարաւային Զորեայի պաշտպանութեան նախարար Լի-ժոնկ Սոփ հաստատեցին, որ ճափոնի հետ պիտի կազմակերպեն եռակողմ ռազմափորձ եւ ռազմական փորձի փոխանակում: Զարաւային Զորեայի նախարարը անցնուց, որ վերատեսութեան պիտի ենթարկեն իրենց քաղաքականութիւնը, դէմ դնելու համար Զիւսիսային Զորեայի սպանալիքներուն:

### ԳԵՐԱՍՏԻՃԱՆ ԶԻԵԻ ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Ուքրանիոյ վարչապետ Տենիս Շիլկալ յայտարարեց, թէ Քիւի մէջ պիտի գումարուի գերաստիճան մը Ուքրանիոյ եւ Եւրոպական միութեան երկիրներուն միջեւ Ուրբաթ օր: Ան անցնուց, որ այս գերաստիճանը պատգամ մը պիտի ուղղէ երկրի բարեկամներուն եւ թշնամիներուն: Ան քայլ մը պիտի դառնայ երկու կողմերուն միջեւ համագործակցութեան զարգացումին համար:

## ՓԱՃԻՆԵԱՆ-ՓՈՒԹԻՆ ՇԵՌԱՆՍՈՍԱՅԻՆ ՉՐՈՅՅ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին երէկ հեռախօսային զրոյց մը կատարած են: Վարչապետը անդրադարձած է Լաչինի միջանցքի փակումին Ատրպէյճանի կողմէ: Ան նաեւ անդրադարձած է այս քայլին իբր հետեւ:



անց մարդասիրական տագնապին ու Ռուսիոյ առնելիք քայլերուն այս հարցը լուծելու ուղղութեամբ: Կողմերը անդրադարձ են նաեւ ռուս խաղաղապահ ուժերու առաքելութեան Արցախի մէջ: Երկու ղեկավարները անդրադարձած են Ատրպէյճան-Հայաստան-Ռուսիա ստորագրուած յայտարարութեան կէտերու գործադրութեան եւ երկու երկիրներուն միջեւ յարաբերութեան զարգացումին:

### ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱՄՔԱՍՏԱՆԷ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ

Միջազգային Արդարադատութեան Լա Յէյի դատարանին մէջ Հայաստանի ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան ամբաստանեց Ատրպէյճանը ցեղային գտում կազմակերպելու մէջ, Արցախը Հայաստանին կապող Լաչինի անցքը



փակելով: Ան յայտարարեց, թէ Միջազգային դատարանը վերջին միջոցն է արդարութեան հասնելու այս հարցին մէջ: Կիրակոսեան անցնուց, որ յայտնի կը դառնայ թէ Ատրպէյճան կը վարէ ցեղային գտումի քաղաքականութիւն Արցախի հայ բնակչութեան դէմ:

Իսկ Ատրպէյճանի արտաքին գործերու փոխնախարար Իլտիւր Մահմետով պատասխանեց, թէ անցքի փակումը սուտ մեղադրանք է: Ան անցնուց, որ Ատրպէյճան խաղաղութիւն կը ցանկայ հայերուն հետ:

12 Դեկտեմբերէն ի վեր ատրպէյճանցի «բնապահականներ» կը փակեն Լաչինի միջանցքը, որ Հայաստանի Զանրապետութիւնը կը կապէ Արցախին: Հայաստան Միջազգային Արդարադատութեան դատարանէն կը պահանջէ դիմել Ատրպէյճանին բանալու համար անցքը:

### ՀԱՅԱՍՏԱՆԳ ԹՈՒՄԻԿԿԵՐ

Ամերիկեան «Ֆոքս 11» պատկերասփիւռի կայանի հաղորդավարուի Արաքիա Կարապետեան անդրադարձած



է հայատեաց թռուցիկներու տարածումին Լոս Անճելըսի շրջանին մէջ: Թռուցիկներուն վրայ գրուած է, թէ «Ատրպէյճան, Թուրքիա, Փաքիստան եւ Իսրայէլ Աստուծոյ կամքով պիտի վերացնեն Հայաստանը»: Հաղորդավարուիին դատապարտած է այս թռուցիկներուն տարածումը:


### ՄԻԱՑԵԱՆ ՈՎՉԱՓՈՐՁ

Պէլառուսիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ Պելառուսիոյ եւ Ռուսիոյ զինեալ ուժերը պիտի կատարեն միացեալ ռազմափորձ: Նախարարութիւնը անցնուց, որ երկու երկիրներուն օդուժերը միացեալ ռազմափորձ պիտի կատարեն յաջորդ շաբաթ:



# ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՊՔ ՏՍՕՐԷՆԻՆ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԱՐԵՒՈՐԱԾ Է ՈՐԱԿԵԱԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀՀ Նախագահ Վահագն Խաչատուրեան ընդունած է Երեւանի պետական համալսարանի տնօրէն Յովհաննէ Յովհաննիսեանը: Հանդիպման ընթացքին տնօրէնը նախագահին ներկայացուցած է համալսարանին մէջ իրա-



կանացուող կրթական եւ ակադեմական բարեփոխումներն ու ծրագիրները, ինչպէս նաեւ անդրադարձած է կրթական գործընթացի կազմակերպման որոշակի հիմնախնդիրներուն եւ անոնց լուծման ուղղուած միջոցառումներուն:

Վահագն Խաչատուրեանը, կարեւորելով որակեալ կրթութեան ապահովումը, ընդգծած է իր պատրաստակամութիւնը՝ հնարաւորինս աջակցելու Մայր բարձրագոյն ուսումնական հաստատութեան մէջ իրականացուող ծրագիրներուն եւ գիտակրթական միջավայրի բարելաւման ուղղուած քայլերուն:

Երկուստեք անդրադարձ կատարուած է ԵՊՔ ինչպէս շէնքային պայմաններուն՝ այդ շարքին ուսանողներու համար նախատեսուած հանրակացարաններու անհրաժեշտութեան, այնպէս ալ ուսումնական գործընթացին վրայ ազդեցութիւն ունեցող բովանդակային բաղադրիչներուն:

# ԵՄ-Ն ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ ԿՈՉ ԸՐԱԾ Է ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԱՉԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԸ ԼԱՉԻՆԻ ՄԻԶԱՆՅՔՈՎ

## ԺՈՉԵՓ ՊՈՐԷԼ ՊԱՏԱՍԽԱՆԱԾ Է ԵՆ ՊԱՏՊԱՄԱՒՈՐԻ ՀԱՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ

2022 թուականի Դեկտեմբերի սկիզբէն Եւրոպական միութիւնը ուշադիր կը հետեւի Լաչինի միջանցքի երկայնքով եւ անոր շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ անոնց մարդասիրական հետեւանքներուն: ԵՄ արտաքին գործերու եւ անվտանգութեան քաղաքականութեան



հարցերով բարձր ներկայացուցիչ, Եւրոյանձնաժողովի փոխնախագահ ժոզեփ Դորել մշտական կապի մէջ է երկու կողմերու արտաքին գործերու նախարարներուն հետ: Կողմերուն հետ սերտ կապի մէջ է նաեւ Հարաւային Կովկասի մէջ ԵՄ յատուկ ներկայացուցիչ Թոյֆո Զլաարը: Այս մասին Նշուած է Եւրոխորհրդարանի պատգամաւոր Աստիթա Զանկոյի՝ Լաչինի միջանցքի արգելափակման վերաբերեալ պաշտօնական հարցումին ժոզեփ Դորելի պատասխանին մէջ:

«ԵՄ-ն Ատրպէյճանին կոչ ըրած է իր իրաւասութեան սահմաններուն մէջ միջոցներ ձեռնարկելու՝ միջանցքով տեղաշարժելու ազատութիւնն ու անվտանգութիւնը ապահովելու համար՝ համաձայն 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան բխող իր պարտաւորութիւններուն», Նշուած է փաստաթուղթին մէջ:

ժոզեփ Դորել կը յիշեցնէ, որ Փրակի մէջ 2022 թուականի Հոկտեմբեր 6-ին ձեռք բերուած համաձայնագրի ծիրին մէջ Հայաստանի մէջ երկու ամիսով տեղակայուած էր ԵՄ առաքելութիւն, որ իր գործունեութիւնը աւարտած էր 2022 թուականի Դեկտեմբեր 19-ին:

Անդրադարձ կը կատարուի նաեւ ԵՄ Նոր դիտորդական առաքելութեան տեղակայման:

«ԵՄ-ն սկսած է ներգրաւուածութեան նոր փուլ՝ որոշելով, ի պատասխան Հայաստանի դիմումին, Հայաստանի մէջ տեղակայել Եւրոպական միութեան քաղաքացիական առաքելութիւն՝ Անվտանգութեան եւ պաշտպանութեան ընդհանուր քաղաքականութեան ծիրին մէջ: Առաքելութեան նպատակն է նպաստել Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կայունութեան, վստահութեան

# ԻՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՐԵԿԱՄ ԵՐԿԻՐ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐ Է:

## ՀՀ ՓՈՒՍԿԱՐԶԱՊԵՏՆ ՈՒ ԻՐԱՆԻ ՓՈՒՆՏԱՄԱԳԱՀԸ ԹԵՀՐԱՆԻ ՄԵՋ ԱՇՈՍՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ

ՀՀ փոխվարչապետ Միւր Գրիգորեանի եւ Իրանի փոխնախագահ Սեյեդ Մասուտ Միրքազեմիի համանախագահութեամբ Թեհրանի մէջ կայացած է Հայ-իրանեան միջկառավարական համատեղ յանձնաժողովի 17-րդ նիստի պայմանաւորուածութիւններու ընթացքը մշտադիտարկող յանձնախումբի նիստը:



Նիստի ծիրին մէջ քննարկուած են երկու երկիրներուն միջեւ առեւտրատնտեսական յարաբերութիւններու զարգացման հեռանկարները, ինչպէս նաեւ ուժանիւթի եւ փոխադրութեան ոլորտին մէջ առկայ համագործակցութեան ընդլայնման հնարաւորութիւնները: Միտքեր փոխանակուած են առեւտրատնտեսական յարաբերութիւններու՝ այդ շարքին ԵԱՏՄ շրջանակներուն մէջ համագործակցութեան զարգացման եւ ընդլայնման համար բարենպաստ պայմաններու ստեղծման շուրջ:

Նիստի նախօրէին կայացած է փոխվարչապետ Միւր Գրիգորեանի եւ Իրանի փոխնախագահ Սեյեդ Մասուտ Միրքազեմիի աշխատանքային հանդիպումը:

Յանձնախումբի աշխատանքներու ծիրին մէջ, Հայաստանի Հանրապետութեան տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու, տնտեսութեան, կենսոլորտի նախարարներու տեղակալներուն մասնակցութեամբ տեղի ունեցած են առանձին թեմատիկ քննարկումներ՝ հայ-իրանեան համագործակցութեան փոխշահաւետ ուղղութիւններով առկայ խնդիրները վերհանելու եւ անոնց լուծման ուղղութեամբ համատեղ միջոցառումներ իրականացնելու նպատակով:

Հայ-իրանեան միջկառավարական համատեղ յանձնաժողովի 17-րդ նիստի պայմանաւորուածութիւնները մշտադիտարկող յանձնախումբի նիստի աւարտին, փոխվարչապետը, Նշելով, որ Իրանը Հայաստանի համար բարեկամ երկիր է կարեւոր գործընկեր է, շնորհակալութիւն յայտնած է Իրանեան կողմին ցուցաբերած ջերմ ընդունելութեան համար եւ կարեւորած է նման ձեւաչափով պարբերական քննարկումներու կայացումը: Փոխվարչապետ Միւր Գրիգորեանը Իրանի փոխնախագահ Սեյեդ Մասուտ Միրքազեմիին հրաւիրած է Երեւան յաջորդ նման ձեւաչափով նիստը կայացնելու համար:

Երկուստեք Նշուած է, որ արձանագրուած խնդիրներուն լուծումները մշտապէս պիտի ըլլան երկու երկիրներու կառավարութիւնների ուշադրութեան կեդրոնին:

# ԱՊՐԻԷԼ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՍՈՖԻԱՅԻ ՄԻԶԵՒ ՕՂԱՅԻՆ ՈՂԻՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՍԿՍԻ

Սոֆիայի եւ Երեւանի միջեւ ուղիղ թռիչքներու մեկնարկը պիտի տրուի 29 Ապրիլէն, յայտնած են Սոֆիայի օդակայանէն: Տոմսերը արդէն կը վաճառուին «Wizz Air»-ի կողմէ: Մինչեւ Յունիսի կէտերը թռիչքներ պիտի իրականացուին Չորեքշաբթի եւ Կիրակի օրերը, իսկ 12 Յունիսէն յետոյ՝ Երեքշաբթի եւ Շաբաթ օրերը:



Կը հաղորդուի, որ Երեւանը Սոֆիայէն դուրս եկող ուղիղութիւններէն մէկը դարձած է այն բանէն յետոյ, երբ «Wizz Air»-ը 2022 թուականի վերջաւորութեան Սոֆիայի օդակայանին մէջ տեղակայեց եօթներորդ օդանաւը: Սա ճանապարհի հարթած է դէպի նոր ուղղութիւններ, ինչպիսիք են Սթոքհոլմը, Համպուրկը եւ Ռիտը:

Սոֆիայի օդակայանէն ընդգծած են թռիչքներու ցանցի ընդլայնման կարեւորութիւնը՝ Նշելով, որ անոր շնորհիւ կը զարգացնեն ոչ միայն օդակայանը եւ օդանաւային ընկերութիւնները, այլեւ այդ տեղական առեւտրին ուղղակիօրէն կ'օգնէ զարգանալու:

# «ՃԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԶԵՌՆԱՐԿ»Ի ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏՆՕՐԷՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 28 Յունուար 2023-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոս ընդունեց «Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի նորանշանակ տնօրէն Երեցկին Քրիստին Դանիէլեան-Սարգիսեանը, ընկերակցութեամբ Լիբանանի խորհրդատու մարմնի ատենապետ Ալին Տէյրմէնճեանի:



Իբրեւ նորանշանակ տնօրէն, Երեցկինը եկած էր ստանալու Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը: Հայրապետը ջերմօրէն ողջունելով Դանիէլեանի նշանակումը տնօրէն՝ անդրադարձաւ «Ճինիշեան»ի առաքելութեան եւ մեծապէս գնահատեց հաստատութեան կատարած մարդասիրական աշխատանքները՝ Լիբանանի, Սուրիոյ ու Հայաստանի մէջ: Նորին Ս. Օծութիւնը յիշեց, որ մօտէն ծանօթ է «Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի գործունեութեան ու Երիցական եկեղեցւոյ, ուր պահ դրուած է հաստատութեան դրամագումարը եւ անդրադարձ կատարեց մեր եկեղեցւոյ հետ անոր ունեցած սերտ գործակցութեան: Ընտրուելով նորանշանակ տնօրէնը՝ Վեհափառ Հայրապետը թելադրեց, որ յատուկ կարեւորութիւն ընծայուի կարիքաւոր ընտանիքներու յատկապէս դեղորայքի օժանդակութեան, նկատի ունենալով Լիբանանէն ու Սուրիայէն ներս շարունակուող ընկերային-տնտեսական տագնապը:

# ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՄԷ ՄԵԿՆԵԼՈՒ ԱՏԵՆ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՊԱՀՊԱՆՈՒԻ ՆԱԽԱՊԷՍ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՕՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՁՔԸ:

## ԱՄԷ-Ի ՄԵՋ ՀՀ ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանէն ԱՄԷ մեկնելու ատեն տակալին կը պահպանուի նախապէս մուտքի արտօնագիր ստանալու պահանջը: Այս մասին պարզաբանում տարածած է Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ Հայաստանի դեսպանութիւնը՝ ընդգծելով, որ փոփոխութիւնը ուժի մէջ մտնելուն պէս դեսպանութիւնը պիտի տրամադրէ յաւելեալ տեղեկատուութիւն:



«ՀՀ կառավարութիւնը 26 Յունուարին կայացած նիստին ընթացքին հաւանութիւն տուած է «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու կառավարութեան միջեւ 2009 թուականի Յունիս 21-ի՝ դիւանագիտական անցագրեր ունեցող անձերու մուտքի արտօնագիր ստանալու պահանջէն ազատելու մասին փոխըմբռնման յուշագրում փոփոխութիւններ կատարելու մասին» արձանագրութեան ստորագրման առաջարկութեան:

Փոփոխութեամբ ՀՀ համաքաղաքացիական անցագրեր կրող քաղաքացիները Արաբական Միացեալ Էմիրութիւններ մեկնելու ատեն պիտի ազատուին մուտքի արտօնագրի պահանջէն միայն արձանագրութեան ստորագրումէն եւ ներպետական ընթացակարգերու աւարտէն յետոյ:

Յարգելի քաղաքացիներ, ԱՄԷ մեկնելու ատեն տակալին կը պահպանուի նախապէս մուտքի արտօնագիր ստանալու պահանջը: Դեսպանութիւնը փոփոխութեան ուժի մէջ մտնելուն պէս պիտի տրամադրէ յաւելեալ տեղեկատուութիւն», Նշուած է պարզաբանման մէջ:

**BOGHOS OPTIC**  
Autoroute Jdeideh,  
Tel.: 01-870016

# ՊԵՎՐՈՒԻ ԶԻՆՉԻ ԸՆԴԱՔԱՊԵՏԸ ԴԱՏԱՊԱՐՏԱԾ Է ՀԱՅԵՐՈՒ ԴԵՍ ՈՒՂՈՒՄԸ ԹՈՒՒՅԻՆԵՐՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Անցած Շաբաթ եւ Կիրակի օրերուն հայամետ ցուցարարներու դեմ ատելութեան խօսք տարածող թռուցիկներ փակցուած են Պեվրոյի Զիլգի մէջ, ուր ցուցարարները երթ կ'իրականացնէին՝ իրենց բողոքը արտայայտելով Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Արցախի մէջ շարունակուող ճնշածամին դէմ: Այս մասին հաղորդած է «Los Angeles Magazine» պարբերականը:



Յուցարարները դիմաւորած են լուսասիներուն փակցուած թռուցիկներով, որոնք կը պարունակէին հետեւեալ սպառնալից խօսքերը. «Ատրպէյճան+Թուրքիա+Փաքիստան+ Իսրայէլ = 4 եղբայրներ, որոնք Զայաստանը պիտի ջնջեն քարտէզին վրայէն: Ինչպիսիք»:

Պեվրոյի Զիլգի քաղաքապետ Լիլ Պոսեյն ընկերային ցանցերուն մէջ անմիջապէս դատապարտած է թռուցիկները, իսկ քաղաքի ոստիկանական բաժանմունքը ուսումնասիրած է Լա Սիենեգայ եւ Ուիլշիր բուլվարների շուրջ տեղադրուած հսկող տեսախցիկները տեսագրութիւնները՝ փնտռելով պատասխանատուները:

«Ես բազմիցս կրկնած եմ՝ ատելութիւնը տեղ չունի Պեվրոյի Զիլգի կամ որեւէ այլ վայրի մէջ: Ես միշտ պիտի մերժեմ այդ, միշտ դեմ պիտի արտայայտուիմ անոր», գրած է Պոսեյն Ֆէյսպուրով հրապարակուած գրառման մէջ:

Լրատումափոքը կը յիշեցնէ, որ 2020 թուականի 6-շաբաթեայ պատերազմէն յետոյ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինը խաղաղապահ զօրքեր տեղադրեց Լաչինի միջանցքին երկայնքով, որով Արցախի հայերը կը կապուին արտաքին աշխարհին հետ:

«Ցեղասպանութիւնը ոչ միայն մարդոց զանգուածային սպանութիւնն է: Այն նաեւ կը սահմանուի որպէս կեանքի այնպիսի պայմաններու ստեղծում, որոնք կը յանգեցնեն մարդոց սպանութեան՝ զանոնք սովամահ ընելով, դեղորայքէ զրկելով, անջատելով տաքութիւնը եւ էլեկտրականութիւնը լեռնային շրջաններուն մէջ, ուր գերոյնէ ցած ջերմաստիճան է», «Los Angeles Magazine»-ը կը մէջբերէ «The California Courier»-ի սիւնակագիր եւ խմբագիր Յարութ Սասունեանի օրոյնածը:

Ըստ պարբերականին՝ Իրաւաբաններու հայկական միութեան Զայերու իրաւունքներու պաշտպանութեան հարցերով յանձնաժողովի Նախագահ Ալեքս Պասթեանը նշած է, որ իր հայրենակիցներուն դեմ ատելութեան յանցագործութիւնները ոչ միայն կ'աճեն, այլեւ հիմնականին մէջ չեն նկատուիր միջազգային հանրութեան կողմէ: Պարբերականը կը յիշեցնէ, որ Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր հայկական եկեղեցին 2020 թուականին յարձակման ենթարկուած է պայթուցիկով, սակայն յարձակումը դեմ չէ բացայայտուած: Զետաքննութիւններու դաշնային գրասենեակը 50 հազար տոլար պարգեւով արձանագրուած է մեղաւորներուն մասին տեղեկութիւններուն համար:

«Սա պարզապէս յանցագործութիւն չէ մեզմէ մեկուն դեմ, սա յանցագործութիւն է բոլորիս դեմ», ըսած է Պասթեանը թռուցիկներուն մասին: Ան անձամբ գիտէ, թէ ինչպէս դաժան խօսքերը կրկնուած արագ վերածուի բռնի գործողութիւններու, ինչպիսիք են եկեղեցւոյ այրումը կամ հայկական դպրոցի վրայ արձակուած գնդակները:

Հանգստեան օրերուն ամերիկահայերուն դեմ ուղղուած սպանալիքները դատապարտած է Լաեյն ամերիկահայերու մեծ համայնք ունեցող Ուեսթ Յոլիվուտի քաղաքապետ Սեփի Շայնը:

«Ատելութեան աճը կը վկայէ ժողովրդավարութեան համար լուրջ սպառնալիքի մասին, եւ մենք բոլորս պետք է շարունակենք հանդէս գալ յանուն սիրոյ եւ ընդդէմ ատելութեան», գրած է Շայնը թուրքերեան իր էջով:

Լրատումափոքը նաեւ կը յիշեցնէ Զոմմի Ֆրանչիսկոս պապին ուղերձը, որ Սուրբ Պետրոսի հրապարակին վրայ պատարագի ժամանակ յիշատակած էր «Լաչինի միջանցքին մէջ ծանր մարդասիրական իրավիճակը»:

# ԵՄ-Ն ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ԿՈՉ ԸՐԱԾ Է ԱՊԱՀՈՎԵԼՈՒ...

(Շարունակուած Բ. էջէն)

ամրապնդման եւ պայմաններ ապահովելու, որոնք պիտի նպաստեն Զայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած ջանքերուն, որոնք կ'աջակցի ԵՄ-ն», ըսուած է փաստաթուղթին մէջ:

Պորէլ նաեւ անդրադարձած է ԵՄ պատգամաւորի հարցումին մէջ Ատրպէյճանի իշխանութիւններուն նկատմամբ սահմանափակող միջոցներու կիրառման վերաբերեալ հարցին:

«Պատժամիջոցները ԵՄ-ի ընդամենը մէկ գործիք են արտաքին եւ անվտանգութեան ընդհանուր քաղաքականութեան նպատակները յառաջ մղելու համար, եւ այս պարագային անոնք չեն դիտարկուիր: Զայաստանի եւ Ատրպէյճանի հետ ԵՄ-ի ջանքերը կեդրոնացած են երկխօսութեան միջոցով լուծումներու հասնելու վրայ, ինչին երկու երկիրներու ղեկավարներն ալ յայտնած են իրենց յանձնառութիւնը», եզրափակած է ժողովի Պորէլ:

# ՊԵՆՉԻՆԻ ԵՒ ՄԱԶՈՒԹԻ ԾՈՒԿԱՅԻՆ ՄԵՋ ԱՌԿԱՅ Ե ՊԱՇԱՐՆԵՐՈՒ ՍՂՈՒԹԻՆ, ԿԱՐԵՒՐ Ե ԽԻՍՏ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ.

## ԱՐՅԱՆԻ ԸՏԱՐԸ ՆԻՍՏ ԿԱՏԱՐԱԾ Է

Արցախի Զանապետութեան պետական Նախարար, շտաբի պետ Ռուբէն Վարդանեանի ղեկավարութեամբ տեղի ունեցած շտաբի նիստին քննարկուած են Ատրպէյճանի կողմէ Արցախի շարունակուող շրջափակման պայմաններուն մէջ բնակչութեան կենսագործունեութեան ապահովման վերաբերող շարք մը հարցեր:



Նիստի ընթացքին ներկայացուած է պարենային ապրանքներու, պենզիի եւ մագուրի շուկաներուն մէջ, ենթակառուցումներու ոլորտին մէջ ընթացիկ իրավիճակը:

Չեկուցուած է, որ կտրօնային համակարգի ներդրումը որոշակի չափով մեղմած է պարենային խնդիրը, սակայն շրջափակման հետեւանքով բնակչութիւնը կը շարունակէ գրկուած մնալ շարք մը կարեւոր ապրանքատեսակներ ձեռք բերելու հնարաւորութենէն:

Ինչ կը վերաբերի պենզիի եւ մագուրի շուկայի իրավիճակին, ապա նշուած է, որ առկայ է պաշարներու սղութիւն եւ կարեւորուած է խիստ խնայողական կարգի պահպանումը:

Նիստի ընթացքին քննարկուած են նաեւ զարնան գիւղատնտեսական աշխատանքներու Նախապատրաստական եւ զարնանացանի կազմակերպման հարցեր: Պետական Նախարարը զարնանացանի՝ պատշաճ ժամկետներու մէջ իրականացման խնդիրը կարեւոր համարած է յատկապէս պարենային անվտանգութեան տեսանկիւնէն՝ նշելով, որ սերմերու տեղափոխման հետ կապուած ներկայիս աշխատանքներ կ'իրականացուին:

Հաշուի առնելով, որ շտաբի անդամները արդէն աւարտած են համայնքներուն մէջ բնակչութեան հետ հերթական հանդիպումներու շարքը՝ պետական Նախարարը պատասխանատուներուն յանձնարարած է ամփոփել բարձրացուած հարցերը եւ անոնք լուծման վերաբերեալ առաջարկներ ներկայացնել:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՕՏԱՐԵԿՐԵԱՅ ԸՆԴԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ՆԵՐԴՐԱԾ ԱՄԱՆՆԵՐԸ ԱՃԱԾ ԵՆ ԱՄԵԼԻ ԸԱՆ 96 ՏՈՒՆՈՒԿ

Զայաստանի մէջ 2022 թուականի արդիւնքով աւանդները աճած են մօտ 43 տոկոսով, Նախորդ տարի աճի բարձր կշռոյթ ունեցած է ոչ-բնակիչներու աւանդները՝ տարեվերջի դրութեամբ կազմելով 1 միլիար 287 միլիոն դրամ: Այս մասին ասուլիսին ըսաւ ՀՀ Կեդրոնական դրամատան Նախագահ Մարթին Գալստեանը:



«Աւանդները աճած են մօտ 43 տոկոսի չափով, որմէ բնակիչներու աւանդներուն աճը կազմած է 29.4 տոկոս, ոչ-բնակիչներու աւանդներուն աճը՝ 96.3 տոկոս», ըսաւ Գալստեանը:

Բնակիչներու աւանդներուն անդրադառնալով՝ ան նշեց, որ պաշարային ցուցանիշը 2022 թուականի դեկտեմբեր 31-ի դրութեամբ կազմած է 3 միլիար 370 միլիոն դրամ, իսկ ոչ-բնակիչներունը՝ 1 միլիար 28 միլիոն դրամ: «Հիմնականին մէջ աճի բարձր կշռոյթ ունեցած են ոչ-բնակիչներու աւանդները», ըսաւ Կեդրոնական դրամատան Նախագահը:

Նախորդ տարուան ընթացքին աճած է նաեւ վարկաւորումը: Կեդրոնական դրամատան Նախագահին խօսքով՝ փոխարժեքին ազդեցութիւնը հանած՝ շուրջ 15 տոկոսի չափով: Հիմնական աճը տեղի ունեցած է բնակիչներու վարկերու հաշուոյն:

# ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ 350.000 ՍԹԵՐԼԻՆ ՅԱՏԿԱՅՈՒՅԱԾ Է ԼԱՅԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԵՆ ՏՈՒՇԱՃՆԵՐՈՒՆ

Բրիտանական Start բարեգործական հիմնադրամը 350.000 սթերլին յատկացուցած է Լաչինի միջանցքի շրջափակումէն տուժածներուն աջակցելու համար:



Այս մասին յայտնած է Բրիտանիոյ արտաքին գործերու Նախարարի ներկայացուցիչ Տեյվիտ Ռաթլին:

«Start հիմնադրամը, որ կը ղեկավարէ Start Network-ը, Բրիտանիոյ մէջ գործող բարեգործական կազմակերպութիւնն է, որուն մեծ նուիրատուն Բրիտանիան է», կ'ըսուի գրութեան մէջ եւ կը շեշտուի, որ կազմակերպութիւնը 350.000 սթերլին յատկացուցած է աջակցելու Լաչինի միջանցքի շրջափակումէն տուժածներուն:

# Հայկազեան Համալսարան ԴՈՎՏՈՐ ԶԱԷՆ ՄԱՐԻՆԵԱՆ ԱՐԽԻՄԱՅԻՆ ՆԻԹԵՐ ԿԸ ՆՈՒՐԻ ԸՆԿԱԿԱՆ ՍՓԻՌԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ



Գոհունակութեամբ կը յայտնեց, որ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ պատմաբան, պատուակալ Դոկտ. Զաւեն Մարիւնեան վերջերս Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի արխիւին նուիրեց տասնամեակներու ընթացքին իր հաւաքած արխիւային կարեւոր նիւթերու թղթածրարները:

Այդ թղթածրարները վերնագրուած են.-

1. «Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններուն հայոց անընդհատութիւնները, 1964-2018».
2. «Հայ գաղթավայրեր-հայ սփիւռք, 1950-ականներէն սկսեալ».
3. «Հայկական Հարցի հոլովոյթը, 1985-2020».
4. «Համաշխարհային Բ. պատերազմի հայկական անընդհատութիւններ, 1939-1945».
5. «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը, 1985-2015».
6. «Ազգային-եկեղեցական տագնաւ, 1956-1963».
7. «ՄԱԿ-ի Ցեղասպանութեան Կանխարգիլումի եւ պատժումի թղթածրար - հայկական անընդհատութիւններ, 1973-1985».
8. «Հայոց Ցեղասպանութեան գիտակցութեան հարցը Թուրքիոյ մէջ»:

Այս նուիրատուութեամբ կը հարստանայ Կեդրոնի արխիւային հաւաքածոն: Դոկտոր Մարիւնեանի եւ Կեդրոնի միջեւ կայացած համաձայնութեան հիմամբ, այս նիւթերը պատշաճ տնօրինութեամբ տրամադրելի պիտի ըլլան վերոյիշեալ հարցերով հետաքրքրուող ուսումնասիրներու:

Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը պատրաստ է ընդունելու արխիւային որեւէ թղթածրար, փաստաթուղթ, յուշագրութիւն, լուսանկարներ, որոնք կ'առնուին հայ իրականութեան: Կեդրոնը, ըստ նուիրատուի փափաքին, պատրաստ է ստացուած արխիւային նիւթերը թուայնացնելու, մշակելու, բնօրինակները վերադարձնելու նուիրատուներուն եւ անհրաժեշտութեան պարագային՝ հրատարակելու զանոնք:

Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը շնորհակալ է Դոկտ. Զաւեն Մարիւնեանին այս նուիրաբերումին համար:

Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն

**info** **UPUPUS**

Սիրելի ընթերցող, Տեղական, միջազգային, մշակութային, մարզական եւ այլ լուրեր բջջային հեռաձայնի վրայ հայերէնով ստանալու համար, անմիջապէս ներբեռնէ լիբանանեան առաջատար եւ անվճար «INFO 3» յաւելումը, որ հասանելի է AppleStore-ի եւ Playstore-ի միջոցաւ:

Այսպիսով դուն հայերէնով եւ վայրկեանը վայրկեանին պիտի իմանաս օրուան վերջին զարգացումները:



### ԼԻԲԱՆԱՆԻ Բ. ՂԱՍԱԿՎՈՐԳԻ Բ. ՓՈՒԼԻ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՌԱՍԻՆԿ ԵՒ ԻՍԼԱՐ ԱՌԱՋԱՏԱՐ

Շաբաթվերջին շարունակուեցան Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան Բ. փուլի 5-րդ հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Առաջին վեցեակ. - Շապապ Պապալպե - Պընթ ժայլ 1-1
  - Ալ Ահլի Նապաթիյէ - Ռասինկ Պէյրութ 1-1
  - Սփորթինկ Ռիատի Պէյրութ - Ալ Իսլահ ՊՇ 1-2
- Դասաւորում. 1) Ռասինկ 23 կէտ 34-13, 2) Իսլահ 21 կէտ 23-13, 3) Շապապ Պ. 16 կէտ 22-21, 4) Ահլի Նապաթիյէ 16 կէտ 19-11, 5) Պընթ ժայլ 11 կէտ 15-18, 6) Սփորթինկ Ռիատի 11 կէտ 15-18:

### ԱՆԳԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՄԱՐՏ. ՈՒՏԱԹ ՅԵՍ ՅԱՂԹԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի բաժակի վերջին 32 խումբերու կամ 4-րդ հանգրուանի վերջին մրցումին, Ա. դասակարգի «Ուեսթ Յէմ Եունայթըտ» իր դաշտէն դուրս յաղեց Գ. դասակարգի «Տերաի Զաունթի»-ին: Յարձակող Պոուլը՝ 10-րդ եւ ճամայքացի յարձակող Անթոնիօ՝ 50-րդ վայրկեաններուն նշանակեցին կոլերը, չէիս կիսապաշտպան Սուշեքի մէկ փոխանցումով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Տերաի Զաունթի (Գ.) - Ուեսթ Յէմ Եուն. (Ա.) 0-2

### ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՎԻՅԱՐԵԱԼ ԶԻՉԵՑԱՒ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան երթի վերջին՝ 19-րդ հանգրուանի վերջին մրցումին, 9-րդ դիրքը գրաւող Մատրիտի «Ռայօ Վալեքանօ» իր դաշտէն դուրս միակ կոլով յաղթեց 5-րդ դիրքը գրաւող «Վիյարեալ»-ին, յարձակող Սերժիօ Բամբոյի 70-րդ վայրկեանին նշանակած կոլով, արժանաբար կիսապաշտպան Թրեխոյի փոխանցումով: Այս արդիւնքով, «Ռայօ Վալեքանօ» բարձրացաւ 7-րդ դիրք: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.



- Վիյարեալ - Ռայօ Վալեքանօ 0-1

### ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՈՒՏԻՆԵԶԷ ՀԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան դարձի առաջին՝ 20-րդ հանգրուանի վերջին մրցումին, 7-րդ դիրքը գրաւող «Ուտինեզէ»-ն իր դաշտին վրայ հաւասարեցաւ 18-րդ դիրքը գրաւող «Վերոնա»-ի հետ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ուտինեզէ - Վերոնա 1-1

### ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՓԱՐԻ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ ՀԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան դարձի առաջին՝ 20-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Փարի Սեն Ժերմեն» իր դաշտին վրայ ընդունեց 11-րդ դիրքը գրաւող «Ռենն»-ը եւ արձանագրեց իր 3-րդ հաւասարութիւնը: Մրցումի 51-րդ վայրկեանին, պրագիցի յարձակող Նեյմար բացաւ մրցումին հաշիւը, գպանացի պաշտպան Խուան Պեռնաթի փոխանցումով: 59-րդ վայրկեանին, «Փարի Սեն Ժերմեն»-ի փոխարինող իտալացի կիսապաշտպան Վերրաթի կարմիր քարտ ստացաւ: Սակայն, մրցումի 90+6-րդ վայրկեանին, անգլիացի յարձակող Պալոկըն հաշիւը դարձուց 1-1, մալիցի կիսապաշտպան Տոմպիայի փոխանցումով: Իսկ 3-րդ դիրքը գրաւող «Օլիմպիք Մարսեյ» իր դաշտին վրայ մրցեցաւ 4-րդ դիրքը գրաւող «Մոնպէ»-ի դէմ ու մրցումը ավարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 17-րդ վայրկեանին, «Մարսեյ»-ի կիսապաշտպան Վերթու սխալմամբ նշանակեց իր բերդին մէջ: Իսկ 47-րդ վայրկեանին, չիլիցի յարձակող Ալեքսիս Սանչէզ հաշիւը դարձուց 1-1: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Փարի Սեն Ժերմեն - Ռենն 1-1
  - Թրուա - Լանս 1-1, - Լորիան - Ռեն 2-1
  - Օլիմպիք Մարսեյ - Մոնպէ 1-1
  - Նիս - Լիլ 1-0, - Զլերմոն - Լանթ 0-0
  - Ամպուիօ - Օլիմպիք Լիոն 0-2
- Դասաւորում. 1) Փարի Սեն Ժերմեն 48 կէտ 49-15, 2) Լանս 45 կէտ 33-14, 3) Օլիմպիք Մարսեյ 43 կէտ 40-17, 4) Մոնպէ 38 կէտ 43-27, 5) Ռեն 37 կէտ 37-22:

### ՀՈՒՆՏՅԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԱԶ-Ի 10 ԿՈՆՆՈՅ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Հոլանտայի ֆուտբոլի ախոյեանութեան դարձի առաջին՝ 18-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Այաքս Ամսթերտամ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 16-րդ դիրքը գրաւող «Վոլլընտամ»-ի դէմ ու մրցումը ավարտեցաւ հաւասարութեամբ: Մրցումի 59-րդ վայրկեանին, «Վոլլընտամ»-ի պաշտպան Միրանի նշանակեց խումբին կոլը, կիսապաշտպան Էյթիսկի փոխանցումով:

Սակայն, 80-րդ վայրկեանին, փոխարինող դանացի կիսապաշտպան Զուտուս հաւասարեցուց հաշիւը, փոխարինող իտալացի յարձակող Լուչայի փոխանցումով: Այս արդիւնքին հիման վրայ, «Այաքս» նահանջեց 5-րդ դիրք: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Էմմեն - ՓՍՎ Այնտհովըն 1-0
  - Կօ Հիտ Իլըզ Տեվընթըր - ԱԶ Ալքմար 1-4
  - Վիթե Արնհեմ - Թվենթէ Էնխքտէ 2-2
  - Ֆեյենուրտ Ռոթթըր. - ՆԻՍ Նայմեկըն 2-0
  - Այաքս Ամսթերտամ - Վոլլընտամ 1-1
- Հոլանտայի ֆուտբոլի ախոյեանութեան դարձի երկրորդ՝ 19-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 2-րդ դիրքը գրաւող Ալքմարի «ԱԶ»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 7-րդ դիրքը գրաւող «Իւթթիսթ»-ի դէմ ու մրցումը ավարտեցաւ տաս կոլանց հաւասարութեամբ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Թվենթէ Էնխքտէ - Ֆեյենուրտ Ռոթթըր. 1-1
  - ԱԶ Ալքմար - Իւթթիսթ 5-5
  - ՓՍՎ Այնտհովըն - Կօ Հիտ Իլըզ Տեվընթըր 2-0
  - Էքսելսիոր - Այաքս Ամսթերտամ 1-4
- Դասաւորում. 1) Ֆեյենուրտ 42 կէտ 43-16, 2) ԱԶ 40 կէտ 40-24, 3) ՓՍՎ 38 կէտ 47-23, 4) Այաքս 37 կէտ 51-21, 5) Թվենթէ 36 կէտ 31-12:

### ՍԿՈՎՏԻԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՄԱՐՏ. ԷՊԸՐՏԻՆ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան Սկոտլանդի ֆուտբոլի բաժակի վերջին 32 խումբերու հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի ամենամեծ անակնկալն էր առաջին դասակարգի 3-րդ դիրքը գրաւող «Էալրտին»-ի իր դաշտէն դուրս պարտութիւնը Շրալանային լիկայի «Տարվել» խումբին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սելթիք (Ա.) - Կրիսթ Մորթըն (Բ.) 5-0
- Սենթ Ճոնսթըն (Ա.) - Ռեյնըրդ (Ա.) 0-1
- Հիպըրիոն (Ա.) - Հարց աֆ Միտլոթիըն (Ա.) 0-1
- Տարվել (Շրշ.լիկա) - Էալրտին (Ա.) 1-0

### ԿԻՊՐՈՍԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՀԱՆԳՐ. ԱՆՈՐԹՈՉԻՍ ՀԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Շաբաթվերջին սկսան Կիպրոսի ֆուտբոլի ախոյեանութեան 21-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 9-րդ դիրքը գրաւող Ֆամակուսթայի «Անորթոզիս»-ը իր դաշտէն դուրս առանց կոլերու հաւասարեցաւ 13-րդ դիրքը գրաւող Փերիսթերոնայի «Տոքս»-ին հետ: Հայաստանի հաւաքականի պաշտպաններ Յովհաննէս Համբարձումեան եւ Վարազդատ Հարոյեան մասնակցեցան «Անորթոզիս»-ի ամբողջ մրցումին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ափոլլոն Լիմասոլ - Օլիմպիաքոս Նիկոսիա 2-1
- Տոքս Փերիսթերոնա - Անորթոզիս Ֆամակ. 0-0

### ԿԻՊՐՈՍԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ. ԱՆՈՐԹՈՉԻՍ ԴԵՊԻ ՅԱՋՈՐԴ ՓՈՒԼ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցաւ Կիպրոսի ֆուտբոլի բաժակի վերջին 16 խումբերու հանգրուանի վերջին մրցումը: Հայաստանի հաւաքականի պաշտպաններ Յովհաննէս Համբարձումեան եւ Վարազդատ Հարոյեանի մաս կազմած 10-րդ դիրքը գրաւող Ֆամակուսթայի «Անորթոզիս»-ը իր դաշտին վրայ մրցեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Էնոսիս»-ի դէմ ու առանց կոլերու հաւասարեցէ ետք հիմնական եւ երկարաձգուած ժամանակին, յաղթեց տուգանային հարուածներով ու անցաւ յաջորդ փուլ: Յովհաննէս Համբարձումեան խումբի հիմնական կազմին մէջն էր եւ փոխարինուեցաւ 96-րդ վայրկեանին: Հարոյեան մնաց պահեստայիններու նստարանին վրայ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Անորթոզիս Ֆամակ. (Ա.) - Էնոսիս (Ա.) 0-0 տուգ. 4-3

### ԾՈՑԻ ԲԱԺԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԻՐԱՔ ՇԱՅԵՑԱՒ ՏԻՏՂՈՍԸ

Շաբթուան ընթացքին Իրաքի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան Ծոցի ֆուտբոլի բաժակի մրցումները: Կիսաւարտական հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Իրաք - Զաթար 2-1
  - Պահրէյն - Օման 0-1
- Իսկ ւարտական մրցումին Իրաք մրցեցաւ Օմանի հաւաքականին դէմ եւ տարաւ դժուար յաղթանակ մը յետ երակարձումի: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Իրաք - Օման 3-2 յետ երկարաձգումի

### ԱՅՍՕՐՈՒՄՆ ԱՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՅՏԱԳԻՐ

- ՖԻՖԱ-Ի ԱՎՈՒՄԵՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ՆԱԽՊՏՐ. ՀԱՆԳՐ.**
- 21:00 Ալ Ահլի (65) - Օբլէնտ Սիթի (122)
- ԱՆԳԼԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏ. ԴԱՐՁ**
- 22:00 Նիքթըրլ Եուն. (3) - Սաութհեմթիթըն (20)
- ԱՆԳԼԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏ. ԴԱՐՁ**
- 22:00 Մանչեսթըր Եուն. (4) - Նոթինկհեմ Ֆորթսթ (13)
- ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐ.**
- 22:00 Ռեալ Պէթիս (6) - Պարսելոնա (1)
- ԻՏԱԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ՄԱՐՏ.**
- 19:00 Ֆիորենթինա (12) - Թորինօ (8)
- 22:00 Ռոմա (6) - Բրենտֆորդ (20)
- ԳԵՐՄԱՆԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՄԱՐՏ.**
- 19:00 ՌՊ Լայպցիգ (3) - Հոֆենհայմ (13)
- 21:45 Մայնց (11) - Պայըրն Միլնիթիս (1)
- ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 21-ՐԴ ՀԱՆԳՐ.**
- 20:00 Նանթ (13) - Օլիմպիք Մարսեյ (3)
- 22:00 Մոնպէլիէ (14) - Փարի Սեն Ժերմեն (1)
- ՓՈՐԹՈՒԿԱՆԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 18-ՐԴ ՀԱՆԳՐ.**

- 21:00 Մարիթիմօ (17) - Փորթօ (3)
- 23:15 Սփորթինկ Լիգայն (4) - Սփորթինկ Պրակա (2)
- ՊԵՏԻԲԵԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐ.**
- 19:45 ԱՍ ԻւփԷՆ (15) - Ժէնք (1)
- ՊԵՏԻԲԵԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՄԱՐՏ. ԵՐԹ**
- 21:45 Իւնիոն ՍԷՆ Կիլուազ (2) - Անվէր (3)
- ՍԿՈՎՏԻԱՅԻ ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐ.**
- 21:45 Սելթիք (1) - Լիվինկսթըն (4)
- 21:45 Հարց աֆ Միտլոթիըն (3) - Ռեյնըրդ (2)
- ԱՐՃԱՆԹԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/32-ՐԴ ՄԱՐՏ.**
- 00:00 Հուրաքան (Ա.) - Եուփանքոլի (2.)
- 02:30 Տեֆենսա Ի ժուպիսիա (Ա.) - Իթուզայինկօ (Դ.)
- ՊԱՍԵԹՊՈՒԻ ԵՆ. ՊԻ.ԷՅ. Ի ԱՆՈՅՅԵԱՆՈՒԹԻՒՆ**
- 02:30 Պոսթըն Սելթիք (1) - Պրուքլին Նեց (4)
- 05:00 Ֆինիքս Սանզ (7) - Աթլանթա Հոքս (8)
- ՊԱՍԵԹՊՈՒԻ ԵՆՈՐՈՒԿԻ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
- 19:30 Անտոլու Էֆէս (10) - Ժալկիրիս Զաունաս (7)
- 21:00 ԱԼՊԱ Պերլին (17) - ԱՍ Մոնաքօ (5)
- 21:45 Ռեալ Մատրիտ (2) - Փանաթինայքոս Աթէնք (15)
- ՊԱՍԵԹՊՈՒԻ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐ.**
- 15:00 Ալ Ռահտա (4) - Արաք.Միաց.Էմիր. (5)
- 17:00 Սթրոնկ Կրուփ (2) - Տիւսան Պէյրութ (1)
- 19:00 Ալ Ռիատի (2) - Պէյրութ Զլապ (4)
- ԹԵԼԻՍԻ ՕՍԵՆ 6ԼՄԵ ՏԵՆՍ ՄՐՅ. 1/16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**
- 01:00-Էն սկսեալ, «eurosport» կայ.
- ՀԵՇՏԵԱՐՇԱՒ**
- 11:35 Մեուտական Արաքիոյ շրջափազք, «eurosport»-Էն
- 13:20 Վուլթթա Ա Վալենսիա շրջափազք, «eurosport»-Էն

### ՊԱՍԵԹՊՈՒ ԵՆՈՐՈՒԿԻ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՕԼԻՄՓԻԱՔՈՍ ԵՒ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՅԱՂԹԱԿԱՆ

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան պասքէթպոլի Եւրոպայի տղոց ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Եւրոպայի դարձի 4-րդ՝ 21-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 2-րդ դիրքը գրաւող «Ռեալ Մատրիտ» իր դաշտին վրայ մրցե-



ցաւ 3-րդ դիրքը գրաւող համերկրացի «Պարսելոնա»-ի դէմ եւ յաղթանակ տարաւ յետ երկարաձգումի ու ամրապնդեց իր դիրքը: «Ռեալ Մատրիտ»-ի ամենալաւ մարզիկն էր արժանաբար կապրիել Տեք, փըրֆոմընս ինտէքս՝ 33, իսկ «Պարսելոնա»-ի ամենալաւ մարզիկն էր չէիս Թոմաս Սաթորանսքի, փըրֆոմընս ինտէքս՝ 17: Ստորեւ տեսնել 21-րդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները:

- Ռեալ Մատրիտ (Սպ.) - Պարսելոնա (Սպ.) 91-86
  - Զառորդներ՝ 16-20, 16-19, 18-20, 23-14, օվըր թայմ 18-13
  - ԱԼՊԱ Պերլին (Գեր.) - Վալենսիա Պասքէթ (Սպ.) 88-94
  - ԱՍ Մոնաքօ (Ֆր.) - Արմանի Միլան (Իտ.) 101-88
  - Փանաթինայքոս Աթէնք (Յուն.) - Ժալկիրիս Զաունաս (Լիթ.) 89-65
  - Լիոն Վիլտորպան (Ֆր.) - Ֆեներպահչէ (Թրք.) 91-77
  - Յրվենա Չվէգտա (Սրպ.) - Փարթիզան Պելկրաստ (Սրպ.) 78-79
  - Պասքոնիա Վիթորիա (Սպ.) - Անտոլու Էֆէս (Թրք.) 114-111
  - Օլիմպիաքոս Փիրէս (Յուն.) - Մաքսայի ԹԱ (Իսր.) 95-89
  - Պայըրն Միլնիթի (Գեր.) - Վիթորն Պոլոնիա (Իտ.) 91-84
- Դասաւորում. 1) Օլիմպիաքոս 14 յաղթ - 7 պարտ / կէտերու տարբ.+178, 2) Ռեալ Մատրիտ 14-7 / +128, 3) Ֆեներպահչէ 13-8 / +66, 4) Պարսելոնա 13-8 / +54, 5) Մոնաքօ 13-8 / -4, 6) Պասքոնիա Վիթորիա 12-9 / +43, 7) Ժալկիրիս 12-9 / -14, 8) Մաքսայի 11-10 / -5:

### ԹԵԼԻՍ ՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՅԱՇԱՐՔ ԾՈՔՈՎԻՉ ՇԱՅԵՑԱՒ ՏԻՏՂՈՍԸ

Աւստրալիոյ Մելբըրն քաղաքի մարզադաշտերուն վրայ ավարտեցան այս տարուան «Մեծ սաղաւարտ»-ի առաջին մրցաշարքի մրցումները: Տղոց մրցաշարքի ավարտական մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Ն. Շոքոլիչ (4) - Ս. Յիցիփաս (3) 6-3, 7-6 թպ 7-4, 7-6 թպ 7-5
- Այս արդիւնքով, թիւ 4 դասուած սերպ Նովակ Շոքոլիչ յաղթեց թիւ 3 դասուած յոյն Սթեֆանոս Յիցիփասին եւ շահեցաւ իր 22-րդ «Մեծ Սաղաւարտ»-ի տիտղոսը հաւասարելով սպանացի Ռաֆայել Նատալի մրցանիշին:

 [www.araraddaily.com](http://www.araraddaily.com)

**ARARAD DAILY NEWSPAPER**  
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN  
 Tel.-Fax: 01-545599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
 Beirut | Lebanon | www.araraddaily.com  
 email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية عربية | المديرة المسؤولة: اني صرافيان  
 تصدر عن شركة مطبوعات الميثاق والشرق (م.م.م.)